

Ազգային փոքրամասնությունների աշխատանքի տեղավորման

քաղաքականությունն ու
միջազգային փորձի ամփոփումը



**Ազգային փոքրամասնությունների աշխատանքի տեղավորման
քաղաքականությունն ու**

միջազգային փորձի ամփոփումը

Սոցիալական իրավացիության կենտրոն

Թբիլիսի 2021



საქართველოს
საერთაშორისო
საპატივისცემის
ცენტრი



Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Embassy of Switzerland in Georgia

Φασտაթութիւթը պատրաստվել է Շվեյցարիայի դեսպանատան կողմից օժանդակված նախագծի „Ազգային փոքրամասնությունների ինտեգրման և իրավունքների պաշտպանության ուժեղացման ուսումնասիրության, կրթության, փաստաբանության և վստահության կառուցողական ճանապարհով” շրջանակներում.

Փաստաթղթի բովանդակությունը միայն սոցիալական իրավասության կենտրոնի (նախկին EMC) պատասխանատվությանն է և ոչ մի դեպքում չի արտահայտում Շվեյցարիայի արտաքին գործերի դաշնային դեսպանատան դիրքորոշումները.

Ամփոփման հեղինակ՝ Էկատերինե Ծուռծումիա
Ղեկավար՝ Թամթա Միքելաձե
Գրքի կազմը՝ Սալոմե Լացաբիձե
Խմբագիր՝ Մեդեա Իմերլիշվիլի

Կազմակերպության նամակագրական թույլտվության բացակայության դեպքում արգելվում է այստեղ առկա նյութի արտատպումը, բազմապատկումը կամ տարածումը առևտրական նպատակով:

Սոցիալական Իրավասության կենտրոն

Հասցե՝ Ի. Աբաշիձեի 12Բ, Թբիլիսի, Վրաստան

Հեռ.՝ +995 0322 2 23 37 06

www.emc.org.ge

info@emc.org.ge

<https://www.facebook.com/EMCRIGHTS/>

Բովանդակություն

ՆԵՐԱՇՈՒԹՅԱՆ և ՀԱՄԱՏԵՔՍՏԻ ՆԿԱՐԱԳԻՐ.....	3
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆԵՐ.....	5
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ	8
ՄԻԱՎՈՐՎԱԾ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ.....	8
ՀՆԴԿԱՍՏԱՆ.....	9
ԱՎՍՏՐԱԼԻԱ.....	11
ՀՈԱՆԴԻԱ.....	12
ԱՐԱԵԼԱՅՆ ԵՎՐՈՊԱ.....	14
ՍԿԱՆԴԻՆԱՎՅԱՆ ԵՐԿՐՆԵՐ.....	16
ԻՍՊԱՆԻԱ.....	17
ԻՆՔՆՈՒԹՅԱՆ և ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԴԻԱԼԵՔՏԻԿԱ	18
ԱՄՓՈՓՈՒՄ.....	21
ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ.....	22

Ներածության և համատեքստի նկարագիր

Վրաստանում աշխատանքի տեղավորման քաղաքականությունը թույլ է և մասնատված. Նրա զարգացման միավորները մեր իրականության մեջ 2012 թվականից, Եվրոմիության հետ համագործակցության և ասոցացման գործընթացին համընթաց առաջացան. Այս ուղությամբ տարված քայլերը, այդ թվում ` աշխատաշուկայի ձևակերպման ռազմավարության մշակումը և աշխատատեղ փնտրողների գրանցման միասնական հարթակի ստեղծումը 2014 թվականից հիմք հանդիսացավ մասնագիտական ուսուցում-վերապատրաստում մասշտաբային ծրագրի աշխատեցմանը:

Չնայած այս փորձերին, աշխատանքի տեղավորման քաղաքականությունը չի հիմնվում պատշաճ ուսումնասիրություններին, համակարգային տնտեսական զարգացման ռազմավարության և մատակարարման պահանջի կողմի միջամտության միջև համապատասխան հաշվեկշռի պաշտպանության սկզբունքին.

Մրա հետ մեկտեղ, այն պայմաններում, երբ երկրում չի գործում արդյունաբերական քաղաքականություն, որը տնտեսական կառուցվածքի էական վերափոխման և պետություն կողմից տնտեսական որոշակի ճյուղերի համակարգային և հետևողական օժանդակության քաղաքականությունների, այդ թվում ` տնտեսական, ֆինանսական քաղաքականության հետ հղումով աշխատանքի տեղավորման ծրագրերի անցկացումն է բացահայտում, գործազրկության անկյունից երկրում իրադրությունը էականորեն չի փոխվում.

Պաշտոնական տվյալներով, Վրաստանում գործազրկության ցուցանիշը 2018թվականին 12,7% էր կազմում.¹ Թեև այս ցուցանիշը ամենայն հավանականությամբ համեմատաբար բարձր է, քանի որ ինքնազբաղները միջազգային չափաշների հիման վրա, աշխատավորներ են կարծվում և համապատասխանաբար, չեն պատկանում գործազուրկների դասին. 2018թվականի տվյալներով ինքնազբաղները Վրաստանում աշխատողների 48% են կազմում: Վերջիններիս բաժարձակ

¹ Վիճակագրական տվյալները հասանելի են: <https://www.geostat.ge/ka/modules/categories/38/dasakmeba-damushevroba>

մեծամասնությունը՝ բնական տնտեսությամբ զբաղվածները, համարվում են աղքատ գյուղատնտեսներ, ովքեր հաճախ նվազագույն պահանջներն անգամ չեն կարողանում բավարարել:²

Ակնհայտ է, որ գոյություն ունեցող իրականությունը կրկնակի անգամ վնասում է ազգային փոքրամասնությունների աշխատանքի տեղավորման գործընթացին, քանի որ կրթության, պետական ծառայությունների, այդ թվում՝ օժանդակ տնտեսական ծրագրերը ունեն անպարարտ հասանելիություն, բացի այդ փոքրամասնությունների լեզվային արմատական բացթողումների խտրական միջավայրի պատճառով, նրանց համար դժվար կլինի ինչպես սոցիալական, այնպես էլ տնտեսական կյանքին ներգրավվումն ու մասնակցումը:

Քաղաքացիական ինտեգրման և ազգամիջյան հարաբերությունների կենտրոնի (CCIR) 2017 թվականի ուսումնասիրությունը, որը 1+4 ծրագրի շահառուների հետ միասին անցկացվեց, ցույց է տալիս, որ հարցվածների 50,8 % իրենց աշխատանքի տեղավորման գլխավոր մարտահրավեր են համարում գործատուի սուբյեկտիվ/ բացասական վերաբերմունքը: Հարցվածների 54% հայտարարում է, որ աշխատաշուկայում ազգային փոքրամասնությունների համար պիտի գոյություն ունենա արտոնյալ քաղաքականություն:³

Ազգային փոքրամասնությունների աշխատանքի տեղավորման խնդիրը առկա է նաև հանրային ծառայություններում: Կանաչ Կովկասի ուսումնասիրության համաձայն, ազգային փոքրամասնությունները Քվեմո Բարթի մունիցիպալիտետի պետական պաշտոնյաների ընդամենը 17% են կազմում, այն դեպքում, երբ նրանք տարածաշրջանի 49% են ներկայացնում: Ուշագրավ է, որ բնակչության քանակի և հանրային պետական աշխատողների միջև ամենամեծ անհամաչափությունը նկատվում է Մառնեուլիի և Բոլնիսի մունիցիպալիտետներում: Ուսումնասիրության համաձայն, Բոլնիսի մունիցիպալիտետի բնակչությունում ոչ դոմինանտ ազգային խմբերի քանակը (69%) և քաղաքապետարանի վարչակազմում նրանց բաժինը (11%) միջև անհավասարությունը 58 % է: Մառնեուլիի մունիցիպալիտետում այս թիվը կազմում է 54%:⁴ Չնայած այս ծանր տվյալներին, մասնատված ծրագրերն էլ մի կողմ, պետությունը չունի արդյունավետ մոտեցում և քաղաքականություն ազգային փոքրամասնությունների աշխատանքի տեղավորմանը խթանելու համար այս ոլորտում, այդ թվում՝ ազգային փոքրամասնություններով խիտ բնակեցված տարածաշրջաններում գործող վարչական մարմիններում:

Ազգային փոքրամասնությունների մեծ մասը ներգրավված է ներքին տնտեսության մեջ: Վրաստանի վիճակագրական ազգային ծառայության 2019թվականի բնակչության տարածաշրջային կտրվածքով տնտեսական ակտիվությունների բաժանման հիման վրա ինքնազբաղների տոկոսային ցուցանիշը գործունյա բնակչությունում, փոքրամասնություններով խիտ բնակեցված տարածաշրջաններում, մասնավորապես՝ Քվեմո Բարթիում (ինքնազբաղվածություն 51%) և Սամցխե Ջավախեթիում (ինքնազբաղվածություն 63%) նշանակալիորեն բարձր է:⁵ Վիճակագրության համաձայն, 2017թվականին գործազուրկ էր Վրաստանի բնակչության 13,9%: Այս տոկոսային ցուցանիշը ազգային փոքրամասնություններում մինչև 23,7% բարձրացավ, ինչը գրեթե երկու անգամ գերազանցում է Վրաստանի բնակչության ընդհանուր ցուցանիշին: Պիտի նշենք, որ վերջին մի քանի տարների ընթացքում նկատվում է որոշակի ակտիվության միտում՝ ազգային փոքրամասնությունների աշխատանքի տեղավորման խթանի քաղաքականության տեսանկյունից, մասնավորապես՝ սոցիալական ծառայության

² Աշխատանքի տեղավորման քաղաքականությունը զարգացման համատեքստում, EMC, 2020, հասանելի է՝ <https://emc.org.ge/ka/products/dasakmebis-politika-sakartveloshi>

³ Քաղաքացիական ինտեգրման և ազգամիջյան հարաբերությունների կենտրոնի (CCIR) ուսումնասիրություն 2017, հասանելի է՝ https://ccir.ge/images/pdf/CCIR%20research%20report_2017.pdf

⁴ Կանաչ Կովկաս, 2016 հասանելի է <http://www.ivote.ge/GREENCAUCASUS/wp-content/uploads/2017/01/Minorities-in-Kvemo-Kartli-Municipal-Administrations-research-presentation-16092016.pdf>

⁵ Վրաստանի վիճակագրական ազգային ծառայություն – 15 և ավելի բարձր տարիքային հասակի բնակչության բաժանումը տնտեսական ակտիվության համաձայն տարածաշրջանային կտրվածքում 2003-2019:

գործակալության աշխատանքի տեղավորման ծրագրերը, քաղաքացիական հավասարության և ինտեգրման պետական ռազմավարության և 2015-2020թվականների գործողության պլանը և վերապատրաստումը հանրային ծառայություններում 1+4 կրթական ծրագրի շահառուների համար:

Այս ծրագրերը, ձևական բնույթ են կրում, հետևողական քաղաքականության մաս չեն, չեն պարունակում խնդրի լուծման արմատական մեխանիզմներ , հետևաբար խնդրի շտկման համար ձևական միջամտության բնույթին են նմանվում: Այն , որ գոյություն չունի ուսումնասիրության վրա հիմնված վիճակագրական տվյալներ, թե որքան է ներկայացուցչական փոքրամասնությունների քանակը առանձին ոլորտային խմբերում , ցույց է տալիս, որ պետությունը նույնիսկ չգիտի, թե ինչ ուղղությամբ պիտի քայլ անի փոքրամասնությունների աշխատանքի տեղավորմանը խթան հանդիսանալու համար:

Ակնհայտ է, որ այս իրականությունը խորացնում ազգային փոքրամասնությունների տնտեսական խոցելիության ու սոցիալական բացառումը , օրակարգ է բերում պետության դրական միջամտության և համապատասխան քաղաքականության անհրաժեշտությունը:

Սույն փաստաթղթի նպատակն է ազգային փոքրամասնությունների աշխատանքի տեղավորման քաղաքականության համապատասխան փորձի ամփոփումը, որը հնարավոր է հետաքրքիր միջոց դառնա պետության համար աշխատանքի տեղավորման քաղաքականությունում ազգային փոքրամասնությունների հատուկ կարիքները հասկանալու և լրացուցիչ օժանդակ քաղաքականությունների անցկացման գործընթացում:

Աշխատանքի տեղավորման քաղաքականության դասակարգումներ

Աշխատանքի տեղավորման քաղաքականությունը կարող ենք սահմանել , որպես ծրագրերի, միջոցառումների և ծառայությունների կազմ, որոնց միջոցով պետությունը փորձում բարձրացնել երկրում աշխատանքի տեղավորման ցուցանիշը: Եվրոմիության վիճակագրության ծառայության –Եվրոստատի դասակարգման համաձայն, աշխատանքի տեղավորման (նույն աշխատաշուկայի) քաղաքականությունը պարզաբանված է ինչպես „Պետության միջամտությունը աշխատաշուկայի վրա, որի գլխավոր նպատակը ներկայացնում է արդյունավետ գործառնությունների ապահովումն ու անհավասարությունների հաղթահարումը“⁶:

Գոյություն ունեն աշխատանքի տեղավորման տարբեր դասակարգեր: Առավել տարածվածը տարբերություն է մի կողմից , աշխատանքի տեղավորման ակտիվ և պասիվ քաղաքականության և մյուս կողմից „առաքման կողմի“ և „ պահանջի կողմի“ քաղաքականությունների միջև: Աշխատանքի տեղավորման պասիվ քաղաքականություն-գործազուրկների ֆինանսական օժանդակություն գործազրկության ժամանակահատվածում:Նրա հիմնական գործիքն է գործազրկության ապահովագրության համակարգը: Ակտիվ քաղաքականություն- աշխատանքի տեղավորման հանրային ծառայության կողմից գործազուրկների համար աշխատանքի տեղավորման տարբեր ծառայությունների առաջարկում, որը , օրինակ պարունակում է խորհրդատվություն, ուսուցման կուրսեր և այլն: Կարևոր է նշել, որ աշխատաշուկայի ինչպես պասիվ , այնպես էլ ակտիվ քաղաքականության հիմնական չափերը առաքման կողմի աշխատանքի տեղավորման քաղաքականությունն է: Վերջինս նկատի ունի այն, որ այս ջանքերը ուղված են գործազուրկներին, նրանց ունակությունների և իրավասիրությունների ուժեղացմանը, խորհրդատվությանն ու ընդհանրապես օգնությանը, որպեսզի նրանք հեշտորեն վերադառնան

⁶ Աշխատանքի տեղավորման քաղաքականությունը զարգացման համատեքստում, EMC, 2020, հասանել է՝ <https://emc.org.ge/ka/products/dasakmebis-politika-sakartveloshi>

აზღაურებულია. Այսօր ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրներում դոմինանտ է առաքման կողմի աշխատանքի տեղավորման քաղաքականությունը.⁷

Ինչ վերաբերվում է „պահանջի կողմի“ աշխատանքի տեղավորման քաղաքականությանը, այն նկատի ունի դեպի աշխատանքային վայրի ստեղծման կողմ ուղղված պետական միջամտություններ: Այստեղ, առաջին հերթին պարզաբանվում է ձեռնարկության զարգացումը խթանող , աշխատանքի տեղավորման հանրային և ֆինանսավորման ծրագրեր և այլն.⁸

Հարկ է նշել, որ „Պահանջի կողմի“ աշխատանքի տեղավորման քաղաքականությունը որակապես տարբերվում է արդյունաբերական քաղաքականությունից. Վերջինիս մեջ նկատվում է մակրոտնտեսական քաղաքականություն, որի նպատակն է երկրի տնտեսական համակարգի փոփոխությունը. Ի տարբերություն „Աշխատանքի տեղավորման քաղաքականությանը“ արդյունաբերական քաղաքականությունը համեմատաբար մասշտաբային նախագիծ է և նպատակ ունի տնտեսության արմատական բարեփոխում. Այս գործընթացում պետության կողմից իրականացվում է տնտեսական որոշակի ճյուղերի օժանդակություն, որն ընթանում է արտահանման, ֆինանսական և ներկրման քաղաքականությունների համադրությամբ.⁹

Համապատասխան իրավական շրջանակ

Վրաստանի սահմանադրության 11-րդ հոդվածի համաձայն խտրականության բոլոր ձևերի վերացման մասին Վրաստանի օրենքի առաջին հոդվածը կանոնավորում է յուրաքանչյուր, այդ թվում՝ ազգային միավորով խտրականության վերացման պարտավորությունը. Սրա հետ մեկտեղ Վրաստանի աշխատանքային օրենսգրքով սահմանված է, որ աշխատանքային նախապայմանագրային հարաբերություններում, այդ թվում՝ թափուր աշխատատեղերի մասին հայտարարությունների հրապարակման և ընտրության փուլում արգելված է ցանկացած տեսակի խտրականություն, այդ թվում՝ խտրականություն ազգային միավորով.¹⁰ Օրենսգրքի բացահայտում է ինչպես աշխատանքային խտրականության հասկացությունը, այնպես էլ ձևերն ու խտրականության արգելման շրջանակները. Օրենսգրքում նշված է նաև , որ խտրականություն չի դիտարկվում յուրահատուկ միջոցառումները, որոնք իրականացվում են այն անձանց կարիքների բավարարման համար, ովքեր , տարիքի, սեռի , սահմանափակ կարողությունների , ընտանեկան պատասխանատվության , սոցիալական և մշակութային կարգավիճակը հաշվի առնելով յուրահատուկ պաշտպանություն կամ օժանդակություն կարիք ունեն.¹¹ Օրենսգրքի 9-րդ հոդվածը ավելի մանրամասնորեն բացահայտում է կանոնը սահմանափակ կարողությունների տեր անձանց նկատմամբ, երբ գործատուն պարտավոր է , հավասար բուժման նպատակով ,աջակցել սահմանափակ կարողությունների տեր անձանց որակավորման բարձրացման, կարիերային առաջընթացին և այլն: Այստեղից ելնելով, օրենսգրքում սահմանված չէ ազգային միավորով միմյանցից տարբերվող անձանց կարիքները, որը աշխատանքի տեղավորման գործընթացին հնարավոր է խոչընդոտի.

Հանրային ծառայության մասին օրենքը, որը ուրիշ հարցերի հետ միասին կանոնավորում է մասնագիտական հանրային պետական պաշտոնյալի աշխատանքի տեղավորման, նաև մունիցիպալիտետներում հանրային ծառայությունների պաշտոնական իրավական հարաբերությունները , միայն օրենքի դիմաց հավասարության մասին ընդհանուր գրառմամբ է սահմանափակվում և չի որոշում

⁷ Աշխատանքի տեղավորման քաղաքականությունը զարգացման համատեքստում, EMC, 2020, հասանել է՝ <https://emc.org.ge/ka/products/dasakmebis-politika-sakartveloshi>

⁸ այնտեղ էլ

⁹ Այնտեղ էլ

¹⁰ Վրաստանի աշխատանքային օրենսգիրք , հոդված 2(3)

¹¹ Վրաստանի աշխատանքային օրենսգիրք , հոդված 8

ինչ-որ հատուկ չափ/միջոցառում, որը կաջակցի ազգային փոքրամասնությունների հանրային ծառայություններում աշխատանքի տեղավորմանը:

Վրաստանի օրենսդրությունում ազգային փոքրամասնությունների աշխատանքի տեղավորման հետ կապված ավելի հատուկ գրառումների չենք հանդիպի, որը հիմքում էլ կիտչնդոտի փոքրամասնությունների աշխատանքի տեղավորման օժանդակությունը ,ինչպես հանրային , այնպես էլ մասնավոր ոլորտում. Չնայած դրան, Վրաստանի կողմից ստանձնած տարարատեսակ միջազգային պարտավորության և միջազգային դատարանների կողմից հաստատված չափանիշները այս ընդհանուր գրառումները լրացնելու համար պիտի քննարկվի:

Աշխատանքային հարաբերություններում խտրականության վերացման հետ կապված հետաքրքիր պարզաբանումներ է առաջարկում Եվրոպայի խորհրդի ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի հանձնաժողովը (ECRI). Նշված հարաբերություններում ազգային միավորով խտրականության վերացման համար ECRI պետություններին կոչ է անում ստանալ համապատասխան չափեր աշխատանքի տեղավորման ոլորտում խտրականության արգելքի վերացման համար, այդ թվում՝ ապահովում է ուսուցանումը և պատրաստումը մարդկային ռեսուրսների և կառավարման աշխատակազմի համար ազգայնորեն, կրոնականորեն և լեզվաբանորեն տարբերվող աշխատակիցների հետ ինտերակցիային օժանդակելու համար, և այս ճանապարհով ռասսայական/ազգային միավորով խտրականության վերացման համար.

Գործնական հարաբերություններում խտրականության վերացման պարտավորվածությունը , այս երաշխավորագի համաձայն, վերաբերվում է ինչպես հանրային , այնպես էլ մասնավոր ոլորտներին: Խտրականության վերացման համար գործատուն ունի դրական գործողության պարտավորվածություն.¹²

Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին համագումարի խորհրդատվական կոմիտեի Վրաստանի մասին 2019 թվականի գեկույցի մի երաշխավորագրում, կոմիտեն իշխանությանը կոչ է անում ՝ ջանք գործադրել ազգային փոքրամասնությունների համար աշխատաշուկայի համարժեք հասանելիության համար.¹³ Չնայած նրան, որ ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակի համագումարում գոյություն չունի հատուկ գրառում փոքրամասնությունների աշխատանքի տեղավորման խթանման ուղղությամբ պետության պարտավորության մասին, համագումարի 15-րդ հոդվածը խորհրդատվական կոմիտեի կողմից հաճախ է բացատրվում և օգտագործվում այս ուղղությամբ. Այս հոդվածի համաձայն, փոքրամասնությունների արդյունավետ մասնակցության համար անդամ երկրները պարտավոր են ստեղծել կարևոր պայմաններ հասարակական , մշակութային , սոցիալական և տնտեսական կյանքում. Մասնակիցների իրավունքը չի տարածվում միայն ընտրած մարմիններում իբրև ներկայացուցչական իրավունք, կամ փոքրամասնությունների խորհրդատվական մեխանիզմների ստեղծման պարտավորությամբ. Այստեղ խորհրդատվական կոմիտեն ենթադրում է հանրային և տնտեսական կյանքին մասնակցելու իրավունք. Այս տեսակետից, կոմիտեի երաշխավորագրերը հաճախ պատկանում են հատուկ չափերի ստացման հարցին, որը փոքրամասնությունների աշխատանքի տեղավորմանն է աջակցում. Մասնավորապես, այս հատուկ չափերը կարող են ներառող փոքրամասնությունների կրթական կամ նախապատրաստական կարիքները, ինչպես հանրային , այնպես էլ մասնավոր ուղղությամբ, նրա համար , որ խմբերը առանձին դիրքորոշման պահպանման համար հավասար պայմաններում լինեն ուրիշ թեքնածուների հետ.¹⁴ Երրորդ ցիկլի շրջանակներում Վրաստանի վերաբերյալ տրված երաշխավորագրերը աշխատանքի տեղավորման ոլորտում հավասար

¹² EMC(2019) ազգային փոքրամասնությունների իրավունքների հետ կապված միջազգային չափանիշների ամփոփում, էջ 67:

¹³ Council of Europe - ADVISORY COMMITTEE ON THE FRAMEWORK CONVENTION FOR THE PROTECTION OF NATIONAL MINORITIES, third opinion on Georgia (2019) -p.43

¹⁴ Կոմիտեի երաշխավորագրերը Ալբանիայի վերաբերյալ, երկերդ ցիկլ, 2008

հնարավորությունների ստեղծման հետ պայամնավորված , հենց հանրային և տնտեսական կյանքում մասնակցման իրավունքին է կապվում.

Միջազգային փորձերի ամփոփումը

Միավորված թագավորություն

Ինստիտուցիոնալ ռասիզմի և փոքրամասնությունների կյանքի ցածր մակարդակի հետ կապված ուսուսումնասիրության հիման վրա միավորված թագավորության ոչ դոմինանտ խմբերի ընդգրկման համար գոյություն ունի չորս հիմնական մոտեցում.

- **Օրենսդրական մոտեցում**, որը հնարավորություն է տալիս փոքրամասնություններին դատարանների և արդյունաբերական տրիբունալներին դիմելու ճանապարհով բողոքարկել գործատու կազմակերպությունների խտրական գործողությունները և պահանջել փոխհատուցում. Հատկանշական է, որ միավորված թագավորությունում գործող 1976թվականի ռասսայական հարաբերությունների վավերագրության արեալը ներառում է անմիջականորեն աշխատանքի տեղավորման ոլորտում գործող խտրական խախտումներ, որոնք տարիների ընթացքում ընդլայնեցին, հստակեցրին և պարզաբանցին խտրական գործողությունների ծառայության մեջ վերցնելու գործընթացում եղած անհավասար միտումները. Սրանից բացի, ստեղծվեց պաշտպանական մեխանիզմներ ,բնակարանային և այլ հիմնական ծառայությունների փաթեթի ապահովության հետ կապված: Արդյունաբերական տրիբունալները կառավարում է գլխավոր իրավաբանը և երկու հրավիրյալ անձ աշխատողների և գործատուների կազմակերպությունների կողմից.

Արդյունաբերական տրիբենալի կողմից մինչև հայցի քննարկումը, գործի նյութերը ուղարկվում է համաձայնության և արբիտաժային ծառայության տեղական մարմին. Արդյունաբերական տրիբունալների հայցը միայն նրանից հետո է քննարկվում, եթե կողմերը համաձայնության չեն գալիս, կամ հայցը չեն խնդրում.

Հատկանշական է, որ գոյություն չունի հայցը հետ վերցնելու դեպք, ինչը պայմանավորված է խոշոր կազմակերպությունների բողոքատուի վրա ազդեցությամբ. Նույնպես խնդրահարույց է հայցի բավարարման դեպքերում ցածր փոխհատուցման հարցը.

- **Վարչական մոտեցումներ** տեղական կառավարությունը ճնշում է գործադրում գործատու ընկերությունների վրա և աշխատանքի տեղավորման քաղաքականության ռազմավարության շրջանակներում ապահովում է հավասար հնարավորություններ և արտացոլում է համապատասխան պայմաններ աշխատանքային պայմանագրերում. Նշված քաղաքականության շրջանակներում ստեղծվել է ռասսայական հավասարության հանձնաժողով, որն ունի մանդատ և հիմնավոր կասկածանքի գոյության դեպքում, կարող է հետաքննել կազմակերպությունների խտրական գործունեությունը, զգուշացնել նրանց և անհրաժեշտության դեպքում նրանց դիմաց գործ հարուցել արդյունաբերական տրիբունալներում. Ռասսայական խտրականությունների վերացման համար հանձնաժողովը համապատասխան նախարարությունների համար մշակում է երաշխավորագրեր.

- **Կամավորական մոտեցումը** կազմակերպությունների կողմից, հավասար քաղաքականության՝ նրանց բարի կամքով դիտարկում է նշանակում, որի համար երկու մարմիններն էլ մշակում են երաշխավորագիր: Դրանք են՝ Ռասսայական հավասարության կոմիտեն և կրթության նախարարության հետ գոյություն ունեցող աշխատանքի տեղավորման դեսպանատունը. Երաշխավորագրերը հավասարապես են գործում ինչպես մասնավոր և հանրային բաժինների, այնպես էլ տեղական մունիցիպալիտետների համար: Այս նշումները երաշխավորագրական խառնվածքի են և կատարման համար պարտադիր չեն: 1992թվականին նրանց գործատուների համար մշակվեց 10 ենթագլխից բաղկացած գործողության պլան, որը ներառում է:

1. Հավասար հնարավորությունների քաղաքականության զարգացում , առաջընթացի և վերապատրաստման խթանման միջոցով.
2. Նպատակային քանակներ պարունակող գործողության պլանի մշակում.
3. Գործատուների համար հավասարության մասին գիտակցության բարձրացման թրեյնինգների հաճախում.
4. Գործողության պլանի շրջանակներում գոյություն ունեցող նվաճումների վերահսկում.
5. Հավաքագրման (ազգային փոքրամասնությունների լեզվով թափուր աշխատատեղերի հաստիքների թարգմանում, մամուլում և կազմակերպություններում նրանց տարածում), ընտրատեղման, առաջընթացի և վերապատրաստումների կանոնավոր վերահսկում.
6. Աշխատանքային նկարագրման հիմնավորված չափանիշների մշակում.
7. Աշխատանքի ընդունելուց առաջ իրավասության բարձրացման թրեյնինգի առաջարկ:
8. Կազմակերպության իմիջի իրազեկության բարձրացում համայնքում.
9. Ճկուն աշխատանքային պայմանների քննարկում երեխա ունեցող ընտանիքների համար.
10. Կազմակերպությունների կողմից համայնքի հետ կապերի հաստատում և խորացում.¹⁵

• **Կոլեկտիվ գործողությունը** նկատի ունի ազգային փոքրամասնությունների կազմակերպությունների և աշխատավոր խմբերի ճնշումը խոշոր կազմակերպությունների վրա պրոֆմիությունների միջոցով, քանի որ նրանք մշակում են հավասարության օժանդակող նախաձեռնություններ և իրականացնում են դրանք. Պրոֆմիության համագումարի կողմից մշակված է երաշխավորագրեր ռասիզմի հետ մարտելու համար, որը ներառում է հետևյալ հիմնական կետերը.

1. Սևամորթ աշխատավորների համար պրոֆմիությունում տեղերի զբաղեցման համը խոչնդոտների հանում:
2. Ակտիվ գործողությունների մշակում ռասայական հայցի հետ կապված:
3. Ռասիստական քարոզչության հետ հակասության պարտավորության ստանձնում.
4. Աշխատակազմի հավաքագրման և առաջընթացի ընթացակարգերի վրա ուշադրության սևեռում.
5. Պրոֆմիության փաստաթղթային թարգմանություն ազգային փոքրամասնությունների լեզվով.
6. Կոլեկտիվ համաձայնություններում հավասար իրավունքների ճանաչում.

Հատկանշական է, որ այս խնդիրը միավորված թագավորությունում մինչ օրս արդիական է ու պրոֆմիություններում սևամորթների և ազգային փոքրամասնությունների մասնակցման ցուցանիշը ցածր է, հատկապես՝ վերին խմբերի պաշտոնավորների նկատմամբ: Հետերոգենության քաղաքականության հաստատումը նրա ամբողջական հասկացողությամբ, մինչ օրս դուրս մնում է.

Հետևության տեսքով կարող ենք ասել, որ Բրիտանիայում փոքրամասնությունների աշխատանքի տեղավորման քաղաքականության հանգուցային խնդիր է կամավորության սկզբունքի բնույթը , որը կազմակերպությունների կողմից կլինի և կկարգավորվի „ներսից“, ոչ թե օրենքի պարտադիր խառնվածքի սկզբունքի շրջանակներում. Ազգային փոքրամասնությունների աշխատանքի տեղավորման տեսանկյունից 2020 թվականին իբրև գլխավոր խոչնդոտ դիտարկված էր լեզուն ու կրթության հարցը , ինչն էլ առիթ հանդիսացավ, որ ընդլայնվի ինչպես վերապատրաստումների քանակն ու պրոֆիլները, այնպես էլ հարստանա լեզու ուսուցանող դասընթացների բյուջեն.¹⁶

Հնդկաստան

¹⁵ Wrench, J., Modood, T., (2000), “The effectiveness of employment equality policies in relation to immigrants and ethnic minorities in the UK”, International Migration Papers Vol. 38, pp. 51-52.

¹⁶ Ethnic minority employment bulletin: January 2020, from: <https://www.gov.uk/government/publications/ethnic-minority-employment-bulletins/ethnic-minority-employment-bulletin-january-2020>.

Հնդկաստանում ազգային փոքրամասնությունների ամենամեծ խումբը հիմնականում ցածր սոցիալական կարգավիճակ ունեցող կաստերը և համայնքներն են ստեղծում. Հնդկաստանի հանրային բաժնում փոքրամասնությունների աշխատանքի տեղավորման տարբեր մոդելներ (նմուշօրինակներ) կան. Նշված ծրագրի վերամշակման համար առանձնացվում է հանրային ծառայության չորս հարթակ: կառավարական ծառայություններ, հանրային բաժնի ձեռնարկություններ , ազգային բանկեր և ապահովագրական ընկերություններ.

Խտրականության և մարգինալիզացիայի հետ մարտում Հնդկաստանում երկշերտ մոտեցում է գործում: 1.Պաշտպանված հակախտրականական կանոնակարգեր; 2.Դրական հզորացման և զարգացման չափեր. Կառավարական գործընթացների արդյունավետորեն կատարումը այսպես է դիտարկվում՝

- Ազգային փոքրամասնությունների հարցազրույցների անցկացման առանձին կառավարում
- Աշխատանքի տեղավորման հարցերին նշանակված հատուկ անձանց կողմից պահեստային քաղաքականության իրագործման հսկողություն յուրաքանչյուր ծառայությունում.
- Փոքրամասնությունների ներկայացուցիչների նշանակում ընտրված խորհուրդներում.
- Ամրագրման արգելք.
- Ազգային փոքրամասնությունների աշխատանքի վայրում զբաղեցրած դիրքերի ամբողջությամբ յուրացման արգելում, այն դեպքում, եթե թեքնածուների մեջ չկան փոքրամասնություններ.
- Ազգային փոքրամասնությունների կողմից զբաղեցրած աշխատատեղերի քանակի համամասնական բաժնեմասի հաստատում.
- Անհրաժեշտ հարցերի սահմանազատում ամրագրման քաղաքականության հաստատման համար.¹⁷

Ուսումնասիրության համաձայն, ամրագրման քաղաքականությունը փոքրամասնությունների աշխատանքի տեղավորման տեսանկյունից արդյունավետորեն է աշխատում հանրային բաժնում, ըստ այդմ էլ , անցած տարիների համեմատ նկատվում է դրական փոփոխություններ. Տարբեր սոցիալական խմբերի աշխատանքի տեղավորման տարատեսակ մակարդակներ է սահմանվել Հնդկաստանի հանրային ծառայություններում , ինչի արդյունքում էլ իրատեսական է դարձել կվոտային մանդատով պայմանավորված տոկոսային մոտավոր նվաճումը. Ամրագրման քաղաքականության աշխատելու համար գործում է մի քանի հաստատություն: Գլխավոր գործող օղակ է համրվում անձնային և վերապատրաստման դեսպանատունը, որը հսկվում է ծառայություններում քվոտների կենտրոնական հսկողությունների և անահտական սպաների կողմից: Նաև գլխավոր օղակ է պետական համագումարը կաստերի և համայնքների համար, որն անկախ կազմակերպություն է և ընդունում է խտրականության հետ կապված հայցերը, ունի գործատուների աշատանքների փնտրման մանդատ և խորհրդարանին ներկայացնում է ամենամյան հաշվետվություն. Ամրագրման քաղաքականություն անցկացման մեջ մասնակցում է նաև համապատասխան նախարարություն և աշխատանքային խումբ, մինչ դեռ նա լրացուցիչ ընդարձակ նպատակներ և ասպեքտներ է ներառում և կարևորում է նրանց ներգրավվածությունը արդյունավետորեն անցկացման համար: Պահուստային աշխատանքային տեղերի համամասնությունը յուրաքանչյուր շրջանում ապրող համայնքների հաշվմանը համապատասխան հաստատվում և չափվում է.

Կարևոր է նշել, որ կառավարական մոտեցումը որոշումների տեսքով արտացոլվում է երկրի սահմանադրությունում և հավասարության սկզբունքը օրենքով է ամրապնդվում: Մասնավորապես՝ արգելվում է աշխատանքի տեղավորման հետ կապված խտրականությունը և կենտրենական ու տարածաշրջանային կառավարություններին հնարավորություն է ընձեռվում ստեղծել պահուստային աշխատատեղեր ազգային փոքրամասնությունների համար, ինչպես նաև պատվիրակության շրջանակներում, փոքրամասնությունների կառուցվածքային օտարացումից պաշտպանելու համար ընդունել հատուկ որոշում՝ կրթական, սոցիալական, քաղաքական և տնտեսական ոլորտներում.¹⁸

¹⁷ Browne, E., (2013), “Ethnic minority public sector employment.”, pp. 3.

¹⁸ Thorat, S., Senapati, C., (2006), “Reservation Policy in India – Dimensions and Issues.”.

Ավստրալիա

Ավստրալիայում փոքրամասնությունները արտիզեններն են: 2008 թվականին , պետական գործընկերության մասին ընդունվեց համաձայնություն , ապրիզենների տնտեսական մասնակցության հետ կապված: Այն լայնամասշտաբ փաստաթղթի մաս է- համաձայնություն արտիզենների պետական բարեփոխման մասին. Ավստրալիայում ազգային փոքրամասնությունների աշխատանքի տեղավորման քաղաքականությունը միասնական համադրություն ունի, որը վերաբերվում է ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր ոլորտներին և ամենահաջողակ մոդելներ (նմուշօրինակներից) է համարվում: Նրա հիմնական կետերն են:

- Փոքրամասնությունների ունակությունների բարձրացում կրթման և վերապատրաստման միջոցով.
- Նախքան աշխատանքի տեղավորումը անհատի գնահատում և նրան վերապատրաստման առաջարկություն հստակ աշխատանքին նախապատրաստելու համար.
- Ոչ ստանդարտ ամրագրությունների ռազմավարության մշակում- ստանդարտ ընտրության արդյունքում չհավանաձ փոքրամասնությունների ներկայացուցիչների աշխատավայրի ձեռք բերելու հնարավորության ստեղծում.
- Աշխատանքի պահպանման մեխանիզմների ստեղծում :
 - Շարունակական խորհրդատվության օժանդակություն
 - Ճկուն աշխատանքային պայմաններ, որոնք արտիզեններին տալիս են հնարավորություն պահպանել հաշվեկշիռը աշխատանքային , հանրային և համայնքային պարտավորվածությունները.
 - Ընտանեկան օժանդակություն
 - Ռասիզմի հետ գոյատևում աշխատանքային վայրերում միջմշակութային թերյինգների օգնությամբ
- Աշխատավարձային ֆինանսավորում և աշխատաշուկայի ուրիշ ծրագրերի մշակում, որոնք աշխատանք փնտրող արտիզենների վրա արդյունավետորեն են ազդում:
- Ուժեղ մակրոտնտեսությունը, ինչպես նոր աշխատավայրերի տեղավորման մեխանիզմ. բիզնեսբաժնի օժանդակություն արտիզենների աշխատանքի տեղավորման մոտիվացիայի բարձրացման համար:
- Աշխատանքի տեղավորման հասկանալի նպատակների մշակում կառավարական ծրագրերի համար:

Արդյունավետության գնահատման համար, Վիքտորիա նահանգում արտիզենի բնակչության աշխատանքի տեղավորման համար գոյություն ունեցող ծրագիրը ուցումնասիրվեց և տրվեց հետևյալ գործոնները:

- Պարզ ռազմավարություն մարկետինգ ունենալ հանրային ցանկացած բաժնի մարմինների համար;
- Փոքրամասնությունների համայնքների հետ խորհրդատվություն և համագործակցություն;
- Հանրային բաժիններում աշխատանքի տեղավորման հնարավորության ստեղծում արտիզենների աշխատանքի տեղավորման միջնորդների աջակցությամբ, որոնք , մի կողմից լավ գիտեն հանրային բաժինը, և մյուս կողմից՝ մերձ կապեր ունեն այն տարածաշրջանների հետ, որտեղ աշխատում են;
- Առաջադիմության գնահատում և մոնիտորինգ;
- Կրթություն և թերյինգներ - Կրթաթոշակ, ծրագիր և աշխատանքի տեղավորմանն հաջորդող մասնագիտական զարգացում, ուսմունքը շարունակելու հնարավորություններ տալ. Դպրոցների հետ կապի հաստատում և կարիերային հնարավորությունների գիտակցման բարձրացում.¹⁹

¹⁹ Browne, E., (2013), “Ethnic minority public sector employment.”, pp. 8-10.

Ուսումնասիրության համաձայն, քննարկված ծրագրերից մտադրված նպատակին հասնելու համար կարևոր հարթակ է ֆինանսավորման քաղաքականությունը, ինչը արորիզենների համար աշխատավայրերի քանակը 19տոկոսով բարձրացրեց և որոշակի ժամանակաշրջան անցնելուց հետո, մոտավորապես 60տոկոսը կարողացավ լրացուցիչ թրենինգների միջոցով որակավորման բարձրացում և չտուրսիտավորված փոխհատուցման անցնել. Հաջողության երկրորդ տեղում է նոր աշխատավայրերի ստեղծումը, որը աշխատանքի տեղավորումը 6 տոկոսով բարձրացրեց.²⁰

Ավստրալիայի կրթական խորհուրդը Ավստրալիայի քաղաքականությունը , արորիզենների աշխատանքի տեղավորման տեսանկյունից, Վիքտորիա նահանգի (ամենախիտ բնակեցված նահանգ) օրինակով գնահատեց և մշակեց 3երաշխավորագիր:

1. .Քաղաքականության հետևողականություն, ինչը նկատի ունի քաղաքականության շարունակական և ոչ մասնատված բնույթ , ակցենտ պիտի սևեռվի երկարաժամկետ ծրագրերին , նրա համար , որ հնարավոր դառնա ծրագրի նվաճումների վրա հերթական առաջադիմության ստեղծում. Հետևողականության ուշադրությունը սևեռված է նրա վրա, որ քաղաքականության մշակման և իրագործման մեջ առավելապես պիտի ներգրավված լինի կառավարության համապատասխան օղակը և հետաքրքրված կողմը. Հաստատված պիտի լինի փոքրամասնությունների աշխատանքի տեղավորմանը չնպաստող պայմանների գործոնների համալիրը և պիտի կատարվի աշխատանքի տեղավորման, բնակավայրի, կրթության և առողջապահության փոխկապակցում նրա համար, որպեսզի փոքրամասնությունների համար ստեղծված նախաձեռնությունները հասկանալի և ընդունելի լինի նրանց համար.
2. Համագործակցություն, ինչը նկատի ունի մեծամասնությունների և փոքրամասնությունների ներկայացուցիչների անհատների , կազմակերպությունների և համայնքների իրական և խորը համագործակցություն: Սա պարտադիր է նրա համար, որ փոքրամասնությունների համար ստեղծված աշխատանքի տեղավորման նախաձեռնությունները հասկանալի և ընդունելի լինեն փոքրամասնությունների համար. Այս համագործակցությունը պիտի լինի դինամիկ, իմաստալից, շարունակական և ժամանակի ընթացքում ունենա ուժեղացման նախապայման. Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հատկապես , գյուղերում ապրող փոքրամասնությունների համայնքում, միջնորդների և կոորդինատորների իրական և ակտիվ ներգրավվածությունը հաջողության նախապայման է և միևնույն ժամանակ, երկարատև գործընթաց է, որը պահանջում է համբերություն:
3. Պարտավորությունների ստանձնման պատասխանատվության պահպանումը կառավարության վերին օղակից սկսած, միջին օղակը հաշված, բոլոր կառավարական բաժինում և կազմակերպությունում պարտադիր է փոքրամասնությունների աշխատանքի տեղավորման քաղաքականության հստակ գործողության իրականացնելու համար:Դաշտում աշխատող չեն կարողանում երկարաժամկետ , սխառնատիկ փոփոխություններ իրականացնել , եթե նրանք չունենան իսկական և գործնական օժանդակություն ղեկավարության կողմից. ²¹

Հոլանդիա

Հոլանդացիների կողմից, 1980ական թվականներից անցկացված պետական և տեղական ինտեգրման քաղաքականությունը նպատակ ունի ազգային փոքրամասնությունների աշխատաշուկայի ներկայացուցչական բարձրացումը և մինչ օրենսդրական մակարդակ բազմերանգ քաղաքականության խրախուսումը: Այսպես կոչված „խիստ“ բազմերանգության քաղաքականությունը երեք հիմնական իրավասիություն է ներառում:

- Համապատասխան կազմակերպության համար այս քաղաքականության անցկացման պարտավորության ստանձնումը

²⁰ Gray, M., Hunter, B., and Lohar, S., (2012), “Increasing Indigenous Employment Rates. Closing the Gap - Clearinghouse Report”, Australian Government, pp.15.

²¹ Purdie, N., Frigo, T., Stone, A., Dick, W., (2006), “Enhancing employment opportunities for indigenous Victorians: a review of the literature.” Australian Council for Educational Research, pp. 93-96

- Աշխատանքի վերցնելիս , երկու մեկ և նույն իրավասության թեքնածուի դեպքում, որոշումների, ազգային փոքրամասնությունների օգտին ընդունման պարտավորություն (արտոնյալ մոտեցում)
- Թիրախային քանակների սահմանում.²²

Բազմերանգության քաղաքականության շրջանակներում պատասխանատվության ստանձնումը նկատի ունի կառավարության կողմից , պարտադիր ուժ ունեցող ակտով հստակ հետևողականություն անձի, կոմիտեի կամ բազմերանգության ծառայության պարտավորության նշված քաղաքականության անցկացման համար պատասխանատվության ստանձման մասին: 1971-2002թվականներն անցկացված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այս քաղաքականությունը ուրիշ քաղաքականություններից արդյունավետ դուրս եկավ. Ավելին, այսպիսի ռազմավարություն , ինչպիսին է կարծրատիպերի և ոչ արտոնյալ խմբերի մեկուսացման վերացումը, առանց պատասխանատվության ստանձման քաղաքականության գրեթե անհնարին պարզվեց.²³

Արտոնյալ մոտեցումը նկատի ունի մեկ և նույն որակավորում ունեցող մրցակիցներից փոքրակամությունների ներկայացուցիչների ընդունումը աշխատանքի. Ավանդույթի համաձայն , արտոնյալ վերաբերմունքը հանրային բաժնում ավելի ճանաչված է, քան մասնավոր բաժնում : Սա արտոնյալ մոտեցման արմատական ձևն է, քանի որ ապահովում է թեքնածուների իրավասությունը, որը որակավորման հավասար մակարդակ է պահանջում դոմինանտ և փոքրամասնությունների խմբի ներկայացուցիչներից. Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ԱՄՆ-ում նման քաղաքականությունը սպիտակամորթ կանանց աշխատանքի տեղավորման համար ընդառաջում են , քան ուրիշ արտոնյալ խմբերի, չնայած որ հաջողությունը բացարձակ բնույթի հայտնաբերվեց և փոքրամասնությունների բոլոր խմբերը չներառեց. Հաճախ արտոնյալ մոտեցումը նրա պատճառով են քննադատում, որ այն ավելի խորհրդանշական բնույթի է և ներկայացնում է ոչ խտրական քաղաքականության անցկացման գործողության մեխանիզմ. Մի կողմից, դժվար է նրա սահմանումը, թե որքանով ունեն երկու թեքնածուները հավասար որակավորում թափուր աշխատատեղի համար և մյուս կողմից, արտոնյալ վերաբերմունքը հնարավոր է տա ընդակառակ ազդեցություն, ինչպիսին է փոքրամասնությունների խմբերի ստիգմատիզացիան դեպի մեծամասնության հակառակակողմի ամրապնդված մոտեցման:

Թիրախային քանակի սահմանումը նկատի ունի կազմակերպությունների կողմից ազգային փոքրամասնությունների աշխատանքի տեղավորման ցուցանշի բարելավումը կազմակերպություններում նրանց ներկակայացուցիչների բարձրացման համար. Այս մոտեցումը տարբերվում է արտոնյալ մոտեցումից, քանի որ միայն արդյունքների գնահատումից ելնելով փորձում է բազմերանգության նվաճում, ուշադրություն է դարձնում կազմակերպչական քաղաքականության անհավասար քանակական արդյունքները և ոչ որակական կազմակերպությունում գոյություն ունեցող անհավասար քաղաքականությունը, օրինակ, փոքրամասնությունների ներգրավվածության և առաջընթացի գործընթացում. Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ինչքան ավելի հավակնոտ է դրական նպատակները, այնքան ավելի բարձր է թիրախային քանակական արդյունքները.

Թիրախային քանակների նվաճումը պայմանավորված է նվազեցման ժամանակ փոքրամասնությունների աշխատավայրից հեռացման կանխարգելմամբ: Խնդիր է ներկայացնում այս մոտեցումներից յուրաքանչյուրի „անսահմանությունը“. Պատասխանատվության ստանձման քաղաքականությունը ըստ էության անիմաստ է և պակասում է ասահմանված նպատակը, սակայն թիրախային քանակի նվաճման ռազմավարությունը անձն է , այսինքն չունի նպատակի նվաճման ճանապարհ.

²² Varbeek, S., Groeneveld, S., (2012), “Do hard diversity policies increase ethnic minority representation?” Personnel Review, Vol. 41, No 5, pp.3.

²³ Kalev, A., Dobbin, F. and Kelly, E., (2006), “Best practices or best guesses? Assessing the efficacy of corporate affirmative action and diversity policies”, American Sociological Review, Vol. 71 No. 4, pp. 589-617.

